


Հաստատված է  
«ՖՐԻԴՈՄ ՖԻՆԱՆՍ ԱՐՄԵՆԻԱ»  
սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության  
միակ մասնակցի կողմից  
Լիազորված անձ՝ Տիմուր Տուրլով



02/02/2023թ.

**«ՖՐԻԴՈՄ ՖԻՆԱՆՍ ԱՐՄԵՆԻԱ» ՍՊԸ  
ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ԲԱՑԱՌՄԱՆ ԵՎ  
ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ  
ԿԱՆՈՆԱԿԱՐԳ**

**1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

- 1.1. Սույն Կանոնակարգը սահմանում է «ՖՐԻԴՈՄ ՖԻՆԱՆՍ ԱՐՄԵՆԻԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից իրականացվող գործարքների արդյունքում Հաճախորդների հետ հնարավոր շահերի բախման բացառմանը և կանխարգելմանն ուղղված միջոցառումների իրականացման ընթացակարգը:
- 1.2. Սույն Կանոնակարգն ուղղված է ապահովելու՝
- 1.2.1. Ընկերության Հաճախորդների շահերի գերակայությունն Ընկերության, Ընկերության աշխատակիցների կամ վերջիններիս և/կամ Ընկերության հետ կապված, ինչպես նաև այլ անձանց անձնական շահերի նկատմամբ,
  - 1.2.2. Ընկերության՝ Հաճախորդների հետ ազնիվ, անկողմնակալ և բարեխիղճ գործելու պարտավորությունների սահմանումը,
  - 1.2.3. Հաճախորդի պատվերները հնարավոր լավագույն պայմաններով կատարելու՝ Ընկերության պարտավորության սահմանումը,
  - 1.2.4. Շահերի բախման հնարավոր դեպքերի, ինչպես նաև դրանց հետ առնչվող այլ ռիսկերի կանխարգելումն ու բացառումը:
- 1.3. Սույն Կանոնակարգում օգտագործվող հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունները՝

**Արժեթուղթ.** Օրենքի 3-րդ հոդվածի 1-2-րդ, 5-7-րդ կետերով սահմանված գործիքները,

**Գործադիր տնօրեն.** Ընկերության միանձնյա գործադիր մարմին, որը ՀՀ օրենսդրությամբ և Ընկերության կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է Ընկերության գործունեության ընթացիկ ղեկավարումը,

**Ընկերություն.** «ՖՐԻԴՈՄ ՖԻՆԱՆՍ ԱՐՄԵՆԻԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ներդրումային ընկերությունը,

**Խորհուրդ.** Ընկերության կառավարման մարմին, որը ՀՀ օրենսդրությամբ և Ընկերության կանոնադրությամբ իր իրավասությանը վերապահված հարցերի շրջանակներում իրականացնում է Ընկերության ընդհանուր ղեկավարումը,

**Հաճախորդ.** ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որի հետ Ընկերությունն ունի ներդրումային և/կամ Ոչ հիմնական ծառայությունների մատուցման գործող պայմանագիր,

**Ներդրումային ծառայություններ.** Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ծառայությունները,

**Շահերի բախում.** սույն Կանոնակարգի 2-րդ կետում նշված դեպքերից մեկը,

**Ոչ հիմնական ծառայություններ.** Օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված ծառայությունները,

**Պատվեր.** ըստ Ընկերության՝ Ներդրումային և/կամ Ոչ հիմնական ծառայությունների մատուցման կանոնները սահմանող ներքին իրավական ակտերում և/կամ Ներդրումային և/կամ Ոչ հիմնական ծառայությունների մատուցման պայմանագրերում օգտագործվող նշանակության,

**Սակագներ.** Գործադիր տնօրենի կողմից կամ Ներդրումային և/կամ Ոչ հիմնական ծառայությունների մատուցման պայմանագրերով հաստատված՝ Ներդրումային և Ոչ հիմնական ծառայությունների սակագները, որոնց համապատասխան Հաճախորդն Ընկերությանը վճարում է այդ ծառայությունների համար,

**Օրենք.** «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքը:

- 1.4. Սույն Կանոնակարգով նկարագրված գործողությունների և/կամ գործառնությունների իրականացումը, Ընկերության և Հաճախորդի միջև հաղորդակցումը կարող է իրականացվել Ընկերության կողմից այդ նպատակով առաջարկվող կամ սահմանված ծրագրային ապահովման և/կամ փոստային հաղորդակցության և/կամ էլեկտրոնային հաղորդակցության և/կամ կապի այլ միջոցներով տեղեկություն կամ հաղորդագրություն (փաստաթուղթ) փոխանակելու միջոցով:

## 2. ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ԴԵՊՔԵՐԸ

- 2.1. Ներդրումային ծառայությունների մատուցման շրջանակներում առաջացող Շահերի բախման հնարավոր դեպքերն են՝
- 2.1.1. Հաճախորդին շուկայականից ավելի բարձր գնով Արժեթղթերի վաճառք Ընկերության, Ընկերության աշխատակիցների կամ վերջիններիս և/կամ Ընկերության հետ կապված, ինչպես նաև այլ անձանց սեփական պորտֆելից՝ առանց հաշվի առնելու Հաճախորդի ներդրումային նպատակները և Հաճախորդի կողմից Ընկերությանը ներկայացված պատվերների էական պայմանները,
  - 2.1.2. Հաճախորդին պատկանող Արժեթղթերի վաճառք շուկայականից ավելի ցածր գնով Ընկերությանը, Ընկերության աշխատակիցներին կամ վերջիններիս և/կամ Ընկերության հետ կապված, ինչպես նաև այլ անձանց,
  - 2.1.3. Հաճախորդի միջոցների ներդրում Ընկերության, Ընկերության աշխատակիցների և/կամ Ընկերության հետ կապված, ինչպես նաև այլ անձանց պատկանող Արժեթղթերում, եթե այդ գործարքն իրականացվել է կամ իրականացվելու է Հաճախորդի համար ակնհայտ ոչ բարենպաստ պայմաններով (non arms length basis),
  - 2.1.4. Հաճախորդին պատկանող Արժեթղթերով Ընկերության, Ընկերության աշխատակիցների և/կամ Ընկերության հետ կապված, ինչպես նաև այլ անձանց օգտին իրականացվող այլ գործարքներ շուկայական գներին

չհամապատասխանող գներով կամ առանց հաշվի առնելու Հաճախորդի ներդրումային նպատակները, եթե տվյալ գործարքից կամ գործարքներից Ընկերությունը, Ընկերության աշխատակիցները և/կամ Ընկերության հետ կապված, ինչպես նաև այլ անձինք ստացել են կամ կարող են ստանալ շահ՝ ի վնաս Հաճախորդի,

- 2.1.5. Հաճախորդի վրա ճնշման գործադրում կամ այնպիսի խորհրդատվության մատուցում, որի արդյունքում կնքված գործարքները համապատասխանում են Ընկերության, Ընկերության աշխատակիցների կամ վերջիններիս և/կամ Ընկերության հետ կապված, ինչպես նաև այլ անձանց շահերին, և այդպիսի խորհրդատվության արդյունքում Հաճախորդը կկրի վնասներ,
  - 2.1.6. Հաճախորդի շահերին կամ Ընկերությանը հայտնի ռիսկի ախորժակին չհամապատասխանող գործարքների կնքում, որը նպատակ է հետապնդում ավելի մեծ ծավալներով միջնորդավճարների և այլ վճարների գանձում Հաճախորդից, եթե Հաճախորդը խելամիտ հնարավորություն ուներ ավելի քիչ միջնորդավճար վճարելով ստանալ համարժեք եկամուտ,
  - 2.1.7. Ընկերությունում համապատասխան հաշիվներում հաշվառվող և ներդրումներ իրականացնելու համար նախատեսված՝ Հաճախորդի միջոցների կանխամտածված պահում Ընկերության սեփական առևտրային ակտիվ գործառնությունների իրականացման նպատակով,
  - 2.1.8. Էական նշանակություն ունեցող և Արժեթղթերի շուկայի գնագոյացման վրա ազդելու հնարավորություն ունեցող՝ Հաճախորդի կողմից ստացված ծառայողական տեղեկատվության օգտագործում ի շահ Ընկերության, Ընկերության աշխատակիցների կամ վերջիններիս և/կամ Ընկերության հետ կապված անձանց:
- 2.2. Վերոնշյալ դեպքերի ցանկը սպառիչ չէ: Ընկերության ներդրումային գործունեությունը կարող է ուղեկցվել Շահերի բախման նաև այլ՝ տեղական և միջազգային ֆինանսական շուկաներում լայնորեն ճանաչված դեպքերով:

### **3. ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ԲԱՑԱՌՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱԾԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ՊԱՅԱՆՁՆԵՐ**

- 3.1. Ներդրումային ծառայություններ մատուցելիս Ընկերության համապատասխան իրավասություններ ունեցող աշխատակիցները պարտավոր են.
  - 3.1.1. պահպանել տվյալ ոլորտը կարգավորող ՀՀ օրենսդրության և Ընկերության ներքին իրավական ակտերի պահանջները,
  - 3.1.2. Ընկերության և Ընկերության Հաճախորդների շահերը վեր դասել սեփական շահերից և խուսափել այնպիսի գործարքների կնքումից, որոնք կարող են չհիմնավորված ու ակնհայտ բացասական ազդեցություն ունենալ Հաճախորդի և/կամ Ընկերության շահերի վրա,

- 3.1.3. ապահովել ներդրողների (Յանախորդների, գործընկերների և շուկայի այլ մասնակիցների) շահերի պաշտպանությունը,
- 3.1.4. իրենց իրավասությունների շրջանակներում տեղեկացնել անմիջական ղեկավարին ՀՀ օրենսդրության և Ընկերության ներքին ընթացակարգերի հնարավոր խախտումների, ինչպես նաև այն գործառնությունների մասին, որոնց առնչությամբ Ընկերությունը ՀՀ օրենսդրությանը համաձայն կարող է դիտվել որպես շահագրգիռ անձ:

#### **4. ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՇԱԽԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ**

- 4.1. Արժեթղթերի շուկայում գործառնություններ իրականացնելիս Ընկերությունը գործում է անկողմնակալության, շիտակության, ճշտապահության և Յանախորդների Արժեթղթերով և դրամական միջոցներով իրականացված բոլոր գործարքների վերաբերյալ վերջիններիս պարտադիր տեղեկացման սկզբունքներով: Այդպիսի տեղեկացման ձևը և կարգը սահմանվում են ՀՀ օրենսդրությամբ և Ընկերության ներքին իրավական ակտերով:
- 4.2. Յանախորդների պատվերները կատարելիս Ընկերությունը գործում է՝ ելնելով բացառապես Յանախորդի շահերի պաշտպանության նպատակից: Այդ առնչությամբ Ընկերության համապատասխան աշխատակիցները պարտավոր են.
  - 4.2.1. չիրականացնել Յանախորդի շահերին հակասող գործարքներ, որոնց միակ կամ հիմնական նպատակն է Ընկերության կողմից տվյալ Յանախորդից գանձվող միջնորդավճարների և այլ վճարների ծավալների մեծացումը,
  - 4.2.2. Յանախորդի պատվերի համաձայն գործարքներ կնքելիս շահերի բախման հնարավոր դեպքերի ի հայտ գալու ժամանակ Յանախորդի ակնհայտ շահերը համարել գերակա Ընկերության շահերի նկատմամբ,
  - 4.2.3. Յանախորդների պատվերներին համապատասխան իրականացվող գործարքներն իրականացնել մասնագիտական բարձր մակարդակով և հնարավոր լավագույն պայմաններով,
  - 4.2.4. կնքել գործարքներ բացառապես Յանախորդների հետ կնքված՝ ներդրումային և/կամ Ոչ հիմնական ծառայությունների մատուցման պայմանագրերով և այդ ծառայությունների մատուցումը կանոնակարգող՝ ՀՀ օրենսդրությամբ և Ընկերության ներքին իրավական ակտերով սահմանված կարգով,
  - 4.2.5. Սակազներով սահմանված չափով գանձել միջնորդավճարներ:

#### **5. ՇԱԽԵՐԻ ԲԱԽՄԱՆ ԲԱՑԱՌՄԱՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ**

- 5.1. Ներդրումային գործունեության իրականացման ընթացքում Ընկերության, Ընկերության աշխատակիցների և/կամ Ընկերության հետ կապված, ինչպես նաև

այլ անձանց և Հաճախորդների միջև հնարավոր Շահերի բախման բացառման նպատակով Ընկերությունում իրականացվում են հետևյալ միջոցառումները.

- 5.1.1. Ընկերության աշխատակիցների, Ընկերության հետ կապված, ինչպես նաև այլ անձանց և Հաճախորդների պատվերների հիման վրա գործարքները կնքվում են բացառապես ՀՀ օրենսդրությամբ և Ընկերության ներքին իրավական ակտերով սահմանված կարգով,
- 5.1.2. Ընկերությունն իրավասու է չկատարել Հաճախորդի Պատվերը (վերջինիս հնարավորինս շուտ տեղեկացնելու պայմանով), եթե Պատվերի կատարումը հակասում է ՀՀ օրենսդրության և/կամ Ընկերության ներքին իրավական ակտերի պահանջներին,
- 5.1.3. Ընկերության համապատասխան աշխատակիցներին արգելվում է կատարել Ընկերության սեփական գործարքները, նույն Էական պայմաններով ներկայացված՝ Ընկերության աշխատակիցների, Ընկերության հետ կապված, ինչպես նաև այլ անձանց պատվերը Հաճախորդի պատվերից շուտ, բացառությամբ այն դեպքերի, երբ տվյալ գործարքի կատարումը բխում է Հաճախորդի շահերից, և այն չի խոչընդոտում վերջինիս պատվերի կատարմանը: Ընկերության յուրաքանչյուր աշխատակից պետք է գիտակցի, որ Շահերի բախում կարող է առաջանալ այն դեպքում, երբ նրա անձնական գործունեությունը կամ հետաքրքրությունները բախվում կամ խոչընդոտում են, կամ կարող են բախվել և խոչընդոտել իր պարտավորություններին, որոնք էլ կարող են արգելք հանդիսանալ այլ աշխատակիցների, ղեկավարների կամ Հաճախորդների հետ արդյունավետ համագործակցությանը,
- 5.1.4. Ընկերության աշխատակիցներն իրավունք չունեն չարաշահել Ընկերությունում ունեցած իրենց դիրքը, պաշտոնը և անձնական նպատակներ հետապնդել կամ անձնական նպատակներով օգտագործել աշխատանքային պարտականությունների կատարման ժամանակ ստացված տեղեկատվությունը: Ընկերության աշխատակիցները պարտավոր են անվերապահորեն հետևել ծառայողական տեղեկատվության պահպանման և ստորաբաժանումների միջև տեղեկատվության փոխանակման՝ ՀՀ օրենսդրությամբ և Ընկերության ներքին իրավական ակտերով սահմանված պահանջներին,
- 5.1.5. Ընկերությունում առանձնացվել են գործարքների կնքման նպատակով Ընկերությանը ներկայացված Պատվերների ընդունման և ըստ ստացված Պատվերի համապատասխան գործարքն իրականացնող ստորաբաժանումների գործառույթները,
- 5.1.6. Ընկերության աշխատակիցներին արգելվում է Հաճախորդին տրամադրել խորհրդատվություն Արժեթղթերի շուկայում գործարքներ կնքելու վերաբերյալ, որի միակ կամ հիմնական նպատակը շահերին ծառայող գործարքների կնքման համար բարենպաստ պայմանների ստեղծումն է, կամ որը հակասում է Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ ՀՀ օրենսդրության պահանջներին,

- 5.2. Ընկերության և Ընկերության Հաճախորդների միջև հնարավոր Շահերի բախման կանխարգելման նպատակով Ընկերությունը՝
- 5.2.1. մշակել և հաստատել Է Պատվերների ընդունման և կատարման, ինչպես նաև կնքված գործարքների հաշվառման ընթացակարգեր,
  - 5.2.2. մշակել և հաստատել Է Ընկերության առանձին ստորաբաժանումների խնդիրներն ու գործառույթները հստակ սահմանող կանոնակարգեր և նշված գործառույթների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պատասխանատվության միջոցներ,
  - 5.2.3. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում պարտավոր Է ներկայացնել հաշվետվություններ Հաճախորդներին վերջիններիս Արժեթղթերով և/կամ դրամական միջոցներով իրականացված գործարքների վերաբերյալ: Հաճախորդին ներկայացվող հաշվետվություններում ներառվող տեղեկատվության կազմը սահմանվում Է Ներդրումային և/կամ Ոչ հիմնական ծառայությունների մատուցման պայմանագրերով և Ընկերության ներքին իրավական ակտերով, բայց չի կարող պակաս լինել ՀՀ օրենսդրությամբ սահմանված տեղեկատվության կազմից:

## 6. ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 6.1. Ներդրումային ծառայությունների մատուցման գործընթացում ներգրավված աշխատակիցները պարբերաբար հրահանգավորվում են սույն Կանոնակարգով, Ընկերության այլ ներքին իրավական ակտերով, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ շահերի բախման կանխարգելման ուղղված միջոցառումների պահպանման հարցերով:
- 6.2. Ընկերության աշխատակիցները, անկախ զբաղեցրած դիրքից և պաշտոնից, պարտավոր են ձեռնպահ մնալ այնպիսի գործողություններից, շահ հետապնդելուց կամ հարաբերություններից, որոնք հակասում են սույն Կանոնակարգում նշված սկզբունքներին և Ընկերության շահերին կամ կարող են դիտվել որպես դրանց հակասող կամ կարող են ազդել աշխատակցի՝ իր աշխատանքային պարտականությունների անաչառ ու ազնիվ կատարման վրա:
- 6.3. Սույն Կանոնակարգը չի վերաբերվում այն դեպքերին, երբ հակասության մեջ են գտնվում կամ կարող Է այդպիսի հակասություն առաջանալ Ընկերության հաճախորդի ու մեկ այլ հաճախորդի միջև:
- 6.4. Ընկերության յուրաքանչյուր աշխատակից, որին իր իրավասությունների շրջանակում հայտնի Է դարձել Ներդրումային և/կամ Ոչ հիմնական ծառայությունների մատուցման ընթացքում ի հայտ եկած կամ հնարավոր Շահերի բախման մասին տեղեկատվություն, պարտավոր Է տեղեկացնել դրա մասին իր ստորաբաժանման ղեկավարին, որն Էլ իր հերթին տեղեկացնում Է Ընկերության ներքին աուդիտն իրականացնող ստորաբաժանման ղեկավարին:

- 6.5. Սույն կանոնակարգի փոփոխությունները և լրացումները հաստատվում են Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի (միակ մասնակցի) կամ վերջինիս կողմից այդ նպատակով լիազորված անձի կողմից և ուժի մեջ են մտնում իրավասու մարմնի կամ անձի որոշմամբ սահմանված ժամկետում:




*Translated from Armenian*

Approved by the sole participant of

"FREEDOM FINANCE ARMENIA"

Limited Liability Company

Authorized person Timur Turlov

  
\_\_\_\_\_

12/02/2023

**"FREEDOM FINANCE ARMENIA" LLC  
REGULATION ON  
EXCLUSION AND PREVENTION OF CONFLICT OF INTERESTS**

YEREVAN 2023

## 1. GENERAL PROVISIONS

1.1. This Regulation defines the procedure for the implementation of measures aimed at the exclusion and prevention of possible conflicts of interest with the Clients as a result of the transactions carried out by the limited liability company "FREEDOM FINANCE ARMENIA".

1.2. This Regulation is aimed at ensuring:

1.2.1. The priority of the Company's Clients' interests over the Company's, the Company's employees or the latter and/or the personal interests of other persons related to the Company,

1.2.2. Defining the Company's obligations to act honestly, impartially and in good faith with the Clients,

1.2.3. Definition of the Company's obligation to fulfill the customer's orders on the best possible terms,

1.2.4. Prevention and exclusion of possible conflicts of interest, as well as other risks related to them.

The terms used in this Regulation have the following meanings:

**Securities.** The instruments defined by points 1-2, 5-7 of Article 3 of the Law,

**Executive Director.** The sole executive body of the Company, which carries out the current management of the Company's activities in accordance with the RA legislation and the Company's charter,

**Company.** "FREEDOM FINANCE ARMENIA" limited liability investment company,

**Council.** The management body of the company, which carries out the general management of the company within the framework of the matters assigned to its authority by the legislation of the Republic of Armenia and the charter of the company,

**Customer.** any natural or legal person with whom the Company has an existing agreement for the provision of Investment and/or Non-core services,

**Investment services.** The services provided for in Article 25, Part 1 of the Law,

**Conflict of interest.** one of the cases mentioned in Clause 2 of this Regulation,

**Non-core services.** The services provided for in Article 26 of the Law,

**Order.** according to the meaning used by the Company in the internal legal acts defining the rules for the provision of Investment and/or Non-core services and/or in the Agreements for the provision of Investment and/or Non-core services,

**Tariffs.** The rates of Investment and Non-core services approved by the Executive Director or by the Investment and/or Non-core services provision agreements, according to which the Client pays the Company for these services,

**Law.** RA Law "On Securities Market".

1.4 The implementation of actions and/or operations described by these Regulations, communication between the Company and the Client may be carried out by the software offered or established by the Company for this purpose and/or postal communication and/or electronic communication and/or other means of communication through to exchange information or message (document).

## 2. POTENTIAL CONFLICTS OF INTEREST

2.1. Possible cases of conflict of interest arising within the framework of the provision of investment services.

2.1.1. Sale of Securities to the Client at a price higher than the market price of the Company, the Company's employees or the latter and/or from the Company's own portfolio, as well as from other persons' own portfolio, without taking into account the Client's investment goals and the essential terms of the orders submitted by the Client to the Company,

2.1.2. Sale of Securities owned by the Client at a lower than market price to the Company, the Company's employees or the latter and/or related to the Company, as well as other persons,

2.1.3. Investment of the Client's funds in Securities belonging to the Company, the Company's employees and/or related to the Company, as well as to other persons, if this transaction was carried out or will be carried out on terms that are clearly not favorable to the Client (non arms length basis),

2.1.4. Securities owned by the Client in relation to the Company, the Company's employees and/or the Company, as well as other transactions carried out for the benefit of other persons at prices that do not correspond to market prices or without taking into account the Client's investment objectives, if from the given transaction or transactions the Company, the Company's employees and/or the Company, as well as other persons have received or may receive a benefit to the detriment of the Client,

2.1.5. Exercising pressure on the Client or providing such advice, as a result of which the concluded transactions correspond to the interests of the Company, the Company's employees or the latter and/or related to the Company, as well as other persons, and as a result of such advice the Client will suffer losses,

- 2.1.6. Entering into transactions that do not correspond to the interests of the Client or the risk appetite known to the Company, which aims to collect higher volumes of commissions and other fees from the Client, if the Client had a reasonable opportunity to receive an equivalent income by paying less commission,
- 2.1.7. Deliberate retention of the Client's funds recorded in the relevant accounts in the Company and intended for investment, for the purpose of carrying out the Company's own commercial active operations,
- 2.1.8. use of service information received by the Client that is of significant importance and has the ability to influence the pricing of the Securities Market for the benefit of the Company, the Company's employees or the latter and/or persons related to the Company.

2.2. The above list of cases is not exhaustive. The investment activities of the Company may be accompanied by other cases of Conflict of Interest, which are widely recognized in the local and international financial markets.

### **3. REQUIREMENTS APPLICABLE TO EMPLOYEES OF THE COMPANY FOR THE PURPOSE OF EXCLUSION OF CONFLICT OF INTEREST**

3.1. When providing investment services, the Company's employees with relevant powers are obliged to:

3.1.1. to comply with the requirements of the RA legislation regulating the given sector and the internal legal acts of the Company,

3.1.2. to put the interests of the Company and the Company's Clients above their own interests and to avoid concluding such transactions that may have an unjustified and obvious negative impact on the interests of the Client and/or the Company,

3.1.3. to ensure the protection of the interests of investors (Customers, partners and other market participants),

3.1.4. within the framework of their competences, to inform the direct manager about possible violations of the RA legislation and internal procedures of the Company, as well as the operations in relation to which the Company can be considered as an interested party according to the RA legislation.

### **4. PROTECTION OF CUSTOMERS' INTERESTS**

4.1. When carrying out operations on the securities market, the Company operates on the principles of impartiality, honesty, punctuality and obligatory notification of the latter regarding all transactions carried out with Clients' Securities and funds. The form

and procedure of such notification are defined by RA legislation and internal legal acts of the Company.

4.2. When fulfilling customer orders, the Company acts solely for the purpose of protecting the interests of the Customer. In this regard, the relevant employees of the Company are obliged to:

4.2.1. not to carry out transactions contrary to the Client's interests, the sole or main purpose of which is to increase the volume of commissions and other fees charged by the Company to the given Client,

4.2.2. When concluding transactions according to the customer's order, when possible cases of conflict of interest appear, consider the obvious interests of the customer to be superior to the interests of the company,

4.2.3. To carry out transactions carried out in accordance with customer orders at a high professional level and in the best possible conditions,

4.2.4. conclude transactions exclusively with the Clients, concluded with Investment and/or Non-core services provision contracts and regulating the provision of these services, in accordance with the RA legislation and the Company's internal legal acts,

4.2.5. Charge commissions in the amount specified by the tariffs.

## **5. MEASURES TO PREVENT CONFLICT OF INTEREST**

5.1. During the implementation of investment activities, the following measures are implemented in the Company in order to exclude possible conflicts of interest between the Company, the Company's employees and/or the Company, as well as other persons and Clients:

5.1.1. Based on the orders of the company's employees, related to the company, as well as other persons and customers, transactions are concluded exclusively in accordance with the procedure established by RA legislation and internal legal acts of the company.

5.1.2. The Company has the right not to fulfil the Customer's Order (with the condition of notifying the latter as soon as possible) if the fulfillment of the Order contradicts the requirements of RA legislation and/or internal legal acts of the Company,

5.1.3. The relevant employees of the Company are prohibited from carrying out the Company's own transactions, the orders of the Company's employees, related to the Company, as well as other persons presented under the same essential conditions, before the Customer's order, except in cases when the execution of the given transaction is in the interests of the Customer and it does not interfere with the latter's order performance. Each employee of the company must be aware that a conflict of interest may arise when his personal activities or interests conflict with or interfere with, or may conflict with and interfere

with, his obligations, which may be a barrier to effective communication with other employees, managers or customers cooperation,

5.1.4. Employees of the company have no right to abuse their position and position in the company and to pursue personal goals or to use the information obtained during the performance of work duties for personal purposes. The company's employees are obliged to unconditionally follow the requirements for the storage of service information and the exchange of information between departments, as defined by RA legislation and the internal legal acts of the company.

5.1.5. In the company, the functions of receiving orders submitted to the company for the purpose of concluding transactions and carrying out the corresponding transaction according to the received order have been separated.

5.1.6. The company's employees are prohibited from providing the Client with advice on concluding transactions on the Securities Market, the sole or main purpose of which is to create favourable conditions for concluding transactions serving the interests, or which contradicts the requirements of RA legislation regarding the activities of persons providing investment services,

5.2. In order to prevent possible conflicts of interest between the Company and the Company's Clients, the Company:

5.2.1. developed and approved procedures for acceptance and execution of Orders, as well as accounting of concluded transactions,

5.2.2. has developed and approved regulations clearly defining the tasks and functions of the Company's separate divisions and measures of responsibility for non-performance or improper performance of the specified functions,

5.2.3. It is obliged to submit reports to the Clients regarding the transactions carried out with the latter's Securities and/or funds, in accordance with the procedure and terms defined by the RA legislation. The composition of the information included in the reports presented to the client is defined by the Investment and/or Non-core services provision agreements and the internal legal acts of the Company, but cannot be less than the composition of the information defined by RA legislation.

## **6. FINAL PROVISIONS**

6.1 Employees involved in the process of providing investment services are regularly instructed on the issues of compliance with these Regulations, other internal legal acts of the Company, as well as RA legislation on measures aimed at preventing conflicts of interest.

6.2 Employees of the Company, regardless of their position and position, are obliged to refrain from such actions, pursuit of interests or relationships that contradict the principles specified in these Regulations and the interests of the Company or can be seen as contradicting them

or can affect the impartial and honest performance of the employee's work duties on performance.

6.3 This Regulation does not deal with cases where there is a conflict or such a conflict may arise between a client of the Company and another client.

6.4 Every employee of the Company, who within the scope of his/her competences has become aware of information about a conflict of interest that has appeared or is possible during the provision of Investment and/or Non-core services, is obliged to inform about it the head of his/her department, who in turn informs the department conducting the internal audit of the Company to the boss.

6.5 Amendments and additions to these Regulations are approved by the general meeting of the Company's participants (the only participant) or by a person authorized by the latter for this purpose and enter into force within the period determined by the decision of the competent body or person.